№ 117 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 3 — 1903 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 3 № 117

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հնագիտական ընկերութեան նիստը. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սերբիական դէպքերի առիթով. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Նամակներ Պարսկաստանից.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Օրվայ հետաքրքրութիւնը քաղաքական աշխարհում Սերբիան է: Այն տեղեկութիւնները, որ ունենք այնտեղ կատարված եղելութիւնների մասին դեռ շատ քիչ են և քաղված են հեռագրական հաղորդագրութիւններից: Լրագիրները առ այժմ բաւականանում են տալով հեռագրական կարճ լուրեր և հաղորդելով տեղեկութիւններ Սերբիայի իշխանական այն տոհմերի մասին, որոնք դեր են կատարել Սերբիայի կեանքում:

Ամենքը գիտէին, որ Սերբիայում տեղի ունեն խոշոր թիւրիմացութիւններ, որ 1901 թ. սահմանադրութեան սահմանափակումը դժգոհութիւն էր յարուցել ազգաբնակութեան մէջ, որ Թագաժառանգ նշանակելու հարցը երկպառակութիւնների առարկայ է դարձել ղեկավարող շրջաններում, բայց ոչ ոք չէր ենթադրում, թէ իրերի վիճակը այնքան լարված դրութեան մէջ է և թէ Սերբիան գտնվում է շատ լուրջ եղելութիւնների շէմքում: Մակեդոնիայում կատարվող դէպքերը, Թիւրքիայի և Բոլգարիայի յարաբերութիւնների լարվելը և պատերազմի կարելիութեան ուրուականը դէպի իրանց էին գրաւել բոլորի ուշադրութիւնը, ուստի ամենքը թեթև աչքով էին նայում սերբիական գործերին, ենթադրելով, որ նրանք կը վճռվեն ժամանակի ընթացքում, ինչպէս շատ անգամ վճռվել են կնճռոտ քաղաքական խնդիրներ այդ նորակազմ թագաւորութեան մէջ: Եղած տեղեկութիւնները մի բան են պարզում, որ Սերբիայում ահա երեք ամիս է, ինչ տիրում է յուզմունք երկրի մէջ և կազմված են եղել գործադիր կոմիտեներ վճռական ծրագիրներով:

Այն անձինք, որոնք գլուխ են կանգնել կառավարութեան, աշխատում են հանգստութիւն և կարգ պահպանել երկրում և շուտով գումարել պատգամաւորական ժողով, որը պետք է համազգային քուէով ընտրէ Պետեր Կարագեօրգիեվիչին թագաւոր Սերբիայի համար: Կարագեօրգիեվիչ սպասում է այդ ընտրութեան, որ իբրև օրինաւոր պետ մուտք գործէ երկրի մէջ և իր ձեռքն առնէ կառավարութեան ղեկը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

—

Կիրակի, յունիսի 1-ին, Թիֆլիսի առաջին արական գիմնազիայի դահլիճում տեղի ունեցաւ Կովկասեան հնագիտական ընկերութեան նիստը, պ. Լօպատինսկու նախագահութեամբ:

Անցեալ նիստի արձանագրութիւնը կարդալուց և հաստատելուց յետոյ, անդամներին բաժանվեց ընկերութեան կանոնադրութիւնը, որ նոր է դուրս եկել մամուլի տակից: Ընկերութեան անդամների համար նաև պատրաստված էին անդամակցական դիպլոմներ:

Ընթացիկ գործերը վերջացնելուց յետոյ, Շուլց կարդաց հետաքրքրական զեկուցում այն ուսումնասիրութիւնների մասին, որ նա արել է Գանձակի գաւառում, այն է Խաչակապ կամ Ղուշչի և Միրզի հայաբնակ գիւղերի շրջակայքում: Խաչակապ գիւղի մօտ, մի վերստ հեռաւորութեան վրա, նա գտել է անցեալ մայիսի 3-ին մի քար, որի վրա կան հին արձանագրութիւններ նման սեպաձև արձանագրութիւններին: Սակայն գրութիւն է այդ, թէ մի ուրիշ բան, դժուար է ասել հաստատապէս. նա չէ դասաւորված կանոնաւոր տողերում, այլ կրում է մի տեղեկացոյցի բնաւորութիւն: Այդ քարը պէտք է բերվի Թիֆլիս՝ ընկերութեան հսկողութեան տակ պահելու համար:

Շուլց կատարել է մի քանի պեղումներ: Խաչակապ գիւղի մօտ նա բացել է մի հին գերեզմանատուն, որ կազմված է եղել մեծ քարաշարերից, երկու արշին երկարութեամբ: Քարերը բերված են ըստ երևոյթին 15—20 վերստ հեռաւորութիւնից: Ամեն մի տապանաքար ունի մօտ 40—50 պուդ ծանրութիւն: Գերեզմանը ունի ուղղութիւն հարաւարևմուտքից դէպի հիւսիսարևելք: Գերեզմանի մէջ նա գտել է բրոնզեայ իրեր՝ դաշոյն, ապարանջան, նիզակ, դանակ, գլխազարդ և ուրիշ իրեր, որոնց գործադրութիւնը դեռ չէ որոշված: Բացի այդ, ազատեայ ուլունքներ: Բրոնզեայ իրերի մէջ գտնված դանակը հետաքրքրական է նրանով, որ ունի երկու փոքրիկ ծակեր, երկարութեան ուղղութեամբ: Մի իրզիկ գիւղի մօտ բացած գերեզմանի մէջ Շուլց գտել է երկու յարկ տակորներ: Վերին յարկը պարունակում է 9 կմախք և երկաթեայ իրեր, ստորին յարկը նոյնպէս 9 կմախք և բրոնզեայ իրեր: Ինչպէս երևում է, մարմինները թաղվել են պատրաստ գերեզմանի մէջ: Առաջին և վերջին թաղումների մէջ անցել է 8—10 դար ժամանակ, այնպէս որ բրոնզեայ դարը փոխվել է երկաթեայ դարի. կմախքները ուղղված են դէպի հիւսիս: Գերեզմանում Շուլց գտել է աւելի հասարակ առարկաներ, մատանիներ, ապարանջաններ, նետ, դաշոյն և ուլունքներ:

Լսելով Շուլցի զեկուցումը, ընկերութիւնը յայտնեց շնորհակալութիւն և որոշեց յատկացնել հարիւր ռուբլի՝ նրա ապագայ հետազօտութիւնների ծախսերը ապահովելու նպատակով:

Ընկերութեան մի քանի անդամներ դիտաւորութիւն ունեն ներկայ ամառվայ ընթացքում ուսումնասիրութիւններ անել երկրի մի քանի կէտերում: Հան, ընկերութեան քարտուղար Պետրովի հետ միասին կայցելէ Մինգրէլիայում գտնվող Նակալակևի կոչված հին քաղաքի տեղը, կը կազմէ աւերակավայրի ուրուագիծը և կը ժողովէ բոլոր գրական նիւթերը այդ հնութեան մասին, սկսած Դիւբուայի ցուցմունքներից մինչև մեր օրերը: Այդ նախնական ուսումնասիրութեան համար ընկերութիւնը նշանակեց 50 ռուբլի: Տակայշվիլի կայցելէ Բօրչալուի գաւառի Ցիցղար գիւղի շրջակայքը, իսկ Ե. Լալայեանց մի շարք ուսումնասիրութիւններ կանէ Զանգեզուրի գաւառում:

Յաջորդ տարվայ համար նշանակված է ուսումնասիրութեան նպատակով Նախիջևանի գաւառի «Մտարաբա-գիլան» կոչված տեղը:

Զեկուցվեց և մի վրացերէն արձանագրութեան մասին, որ գտնվել է հիւսիսային Կովկասում, Մաշկա գետի մօտ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզի խառնակութիւնները

I

Թաւրիզ, մայիսի 22-ին

Ապրիլի 20-ին նորին բարձրութիւնը մի ամսեայ ժամանակամիջոցով անցաւ Խոյ, Սալմաստ, Ուրմի, Սովուչբուլաղ, Մարաղայ պտրտելու: Նրա բացակայութիւնից օգտվելով, քաղաքիս մուշտէիդ Հաջի-Միրզա-Հասան տղան չրջականերից թալաբաներին հաւաքեց և նրանց միջոցով աննպաստ լուրեր տարածեց հասարակութեան մէջ, որ կառավարութեան թուլութեան պատճառով մեր գործերի գլուխ են անցել քրիստոնեաները, նրանք էլ հետզհետէ իսլամ ժողովուրդի տուրքերը ծանրացնում են, բաւական չեն մաքսերի խնդիրները, հացի և մսի գործերն էլ պէտք է յանձնվեն ֆռանկիներին, որոնց մօտ պաշտօններ գտնելու համար մի քանի անհաւատարիմ մուսուլմաններ դրպրոցներ են բացել, մեր երեխաներին փոխանակ Ղուռանի վարդապետութիւնը սովորեցնելու՝ ռուսերէն և ֆրանսերէն լեզուներ են սովորեցնում, եւրոպական զգեստներ հագցնել տալիս. այնտեղերում սովորողները գնում են գինետներում խմում և «խլաֆ-չառ» (չարիաթի հակառակ) գործեր են անում և այլն:

Մայիսի 20-ին նորին բարձրութիւն թագաժառանգը ժամանեց քաղաք, 21-ին երեկոյեան ժամին երկու հարիւր հոգու չափ թալաբաներ զինված ատրճանակներով և սրերով յարձակվում են Հաջի-Աբդալասումի կարվանսարայում հայերի խանութների վրա և երեք դուքան թալանում են: Խանութպաններից երկուսը փախչում են, իսկ մէկին բռնելով քաշ տալով տանում են Հաջի-Միրզա-Հասան աղայի տունը: Դուքանները թալանելուց, կօնեակի, տրադի և շամպայնի չիշերը թալաբանները խնամքով գնում են դրպանները, իսկ միւս մանրուքները, եթէ գետին էին ընկնում, կարևորութիւն չէին տալիս: Գիշերը թէ Հաջի-Միրզա Հասան մուշտէիդի և թէ մի քանի այլ տներում թալաբաները ժողովներ են ունենում. նորին բարձրութիւն թագաժառանգը, այդ բանը իմանալով, մարդ է ուղարկում և մուշտէիդին ուղում: Սա ուզում է գնալ, բայց թալաբաները չեն թողնում և թագաժառանգի կողմից եկած պաշտօնական թակելով, հեռացնում են:

Գիշերը որ և է անկարգութիւն տեղի չունեցաւ. այսօր առաւօտեան ժամը 6-ին լուր բերին, որ թալաբաները լցվել են բազարները, պատահող քրիստոնեաներին հայհոյում են, որ վերադառնան իրանց տները, իսկ պարսիկ խանութպաններին սպառնում, որ խանութները փակելով, իրանց հետևեն: Մինչև ժամի 9-ը տասն հազար հոգու չափ բազմութիւն հաւաքվում է Շաղդի-Մաշիդում և նրա փողոցներում, ապա թալաբաներից մի խումբ գնում է մուշտէիդի և Իմամ-Ջումի և այլ հոգևորականների մօտ, որ գան մզկիթ: Մի քանիսը դժուարութիւն էին յարուցել, բայց թալաբաները գալով բռնի տնից հանել էին: Երբ բոլոր հոգևորականութիւնը հաւաքվում է մզկիթում, Հաջի-Սէյիդ Մամադ փիշնամազին պատգամաւոր են ուղարկում վալիաթի մօտ, պահանջելով հետևեալների գործադրութիւնը մինչ կէսօր. 1) մաքսային վերջին տարիքը ոչնչացնել ու հաստատել հինը. 2) մաքսատներում և պօստատներում բոլոր քրիստոնեայ պաշտօնեաներին հեռացնել ու նրանց պաշտօնները յանձնել մուսուլմաններին. 3) Ատրպատականի մաքսերի ու պօստերի ընդհանուր կառավարիչ բելգիացի պ. Պրիմին մինչև կէսօր քաղաքից հեռացնել, եթէ ոչ նրա տան վրա յարձակվելով կը թալանեն և նրա հետ կը վարվեն այնպէս, ինչպէս իրանց կամքն է, 4) քաղաքի պարսիկ դպրոցները, որտեղ աւանդվում են ռուսաց և ֆրանսիական լեզուները, անմիջապէս փակել. 5) քաղաքի բոլոր գինետները ու նոր բացված երկու հիւրանոցները փակել: Այդ պահանջը երբ չը գործադրվի, ստիպված կը լինեն ուրիշ քայլեր անելու:

Նորին բարձրութիւն գահաժառանգը, Ամիր-Նիզամի քարտուղարի և Բակլար բեկու հետ խորհրդակցելով, և ի նկատի ունենալով, որ պահանջված զօրքը պատրաստի չունեն, որ կարողանան խռովարարներին ձերբակալել և հաւաքված բազմութիւնը ցրվել, որոշում են չարիքի առաջն առնելու համար նրանց առաջարկներն առ ժամանակ ընդունել: Թագաժառանգը իր ձեռքով հետևեալն է գրում. «Ժողովուրդն իմ որդիներս են, իմ մտածմունքի առարկան նրանց անդորրութիւնը, հանգստութիւնն է. մաքսային նոր տարիֆի համար Նորին Վեհափառութիւն Շահն հնչահին դիմելով կը խնդրեմ, որ ժողովրդի բեռը թեթևացնէ, մինչև մի ժամ պ. Պրիմին քաղաքից հեռացնել կը տամ, դպրոցները և գինետները փակել կը տամ: Անմիջապէս մարդ է ուղարկում Ղալաբէկու մօտ, որ հայոց թաղի դռները փակել տայ և լաւ հսկողութիւն անէ, որ հայոց թաղերում որ և է դէպք չը պատահի: Ապա ֆրանսերէն գրում է պ. Պրիմին, որ քաղաքից պէտք է հեռանայ առանց ուշանալու: Այդ գրութիւնը իր առաջնակարգ պաշտօնեայ Սըրաճմամալիքի միջոցով ուղարկում է և նրա միջոցով յայտնում է. «ցաւում եմ, որ ստիպված եմ ինձանից անկախ պատճառով, քաղաքի անկարգութիւնների առաջն առնելու համար, այսպէս հրաման արձակել, մի քանի օրով քաղաքից հեռացէք մօտ գիւղաքաղաքներից մէկը, ուր որ ցանկանում էք, սպասեցէք մինչև նոր կարգադրութիւն լինելը»:

Մինչև Սըրաճմամալիքի գալն արդէն պ. Պրիմի լսած է լինում ժողովրդեան պահանջները և սպառնալիքները: Նորին Բարձրութեան նամակը կարդալուց և Սըրաճմամալիքի ասածները լսելուց յետոյ, ասում է թէ իբր պարսիկ կառավարութեան պաշտօնեայ, Նորին Բարձրութեան հրամանին հնազանդվելով, անմիջապէս քաղաքից կը հեռանամ: Իսկոյն Թէհրան՝ մաքսատների ընդհանուր կառավարիչ միւսիո Նոսին եղելութիւնը հեռագրում է և պատրաստվում է ճանապարհվելու: Մինչև կառքի պատրաստելը, Նորին Բարձրութիւնը իր փառաչ բաշի Նայիբ սուլթանին 7 ձիաւորներով ղրկում է, որ ուղեկցէ Պրիմին, որպէս զի ճանապարհին որ և է անպատուութիւն տեղի չունենայ: Նաև

Եւրոպայում (ինչպէս վկայում են բոլոր եկեղեցական դերասանները), գանգատներ են լսվում, որ վարձը թանգ է, ներկայացումները դէֆիցիտ են տալիս։

Բայց այդ դէֆիցիտը ծածկելու շատ հեշտ միջոց կայ։ Թող ամեն մի հայ, որի սրտին մոտ է Թատրոնի ապագան, թող Դրամատիկական ընկերութեան ամեն մի անդամ վերցնէ աբոնիմենտ և տարածէ իր շրջաններում ընկերների, բարեկամների, ծանօթների մէջ։

Կոմիտէտը իր կողմից աբոնիմենտներին որոշ տոկոս զիջում կանէ և վճարները թոյլ կը տայ մոցնել մաս-մաս։

Ո՞ւր են մեր մեկենասները, որոնք յայտնէին վաղը լրագիրների միջոցով, որ հայոց Դրամատիկական ընկերութեան վնասը—6 հազար—ընդունում են իրանց վրա և խնդրում են շարունակել ապագայում, առանց երկիւղ կրելու ապագայ դէֆիցիտի մասին...

Քաղցր երազ...

Դերասան Գ. Պետրոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կիրակի, յունիսի 1-ին, առաւօտեան ժամը 12-ին, տեղի ունեցաւ Ներսիսեան հայոց հոգեոր դպրոցի ակտը, որին ներկայ էին առաջնորդ Սուրէնեան արքեպիսկոպոսը, հոգաբարձութեան անդամները և երկտեռ հասարակութեան խուռն բազմութիւն։ Ակտը կատարվեց դպրոցի բակում, որն, այդ առիթով, զարդարված էր ծաղիկներով և նշանակներով։ Աշակերտական երգեցիկ խումբը, ղեկավարութեամբ պ. Մամաջանեանի բացեց հանդէսը շարականով, որին հետեւեց կայսերական օրհներգը։ Ապա տեսուչ Ս. Բալաղեան կարդաց ուսումնարանի ուսումնական մասի տեղեկագիրը և այն աշակերտների անուանացուցակը, որոնք աւարտել են իրանց ուսումը այս տարի և որոնց մասին արդէն հաղորդեցինք «Մշակում»։ Հոգաբարձու Յ. Ալիխանեան կարդաց դպրոցի տնտեսական մասի տեղեկագիրը, որի մանրամասնութիւնը նոյնպէս անցեալ անգամ հաղորդեցինք «Մշակում»։ Մէջ առ մէջ երգեցիկ խումբը երգում էր երգեր, որոնք հաճելի տպաւորութիւն էին թողնում հանդիսականների վրա։ Աշակերտ Եսայեան շատ գեղեցիկ կարդաց Ռ. Պատկանեանի «Իմ սոխակին» բանաստեղծութիւնը, ինչպէս աշակերտ Էլիբէկեան, որ կարդաց Ա. Ահարոնեանի «Աքաղաղ» պատմուածքը։ Վերջում, տեղի ունեցաւ մրցանակների և վկայականների բաժանումը առաջնորդի ձեռքով, որից յետոյ երգեցիկ խումբը երգեց ժողովրդական երգեր «Զան գիւլում» և այլն։ Առհասարակ, հանդէսը լաւ տպաւորութիւն թողեց։

—

Կիրակի, մայիսի 25-ին, կայացաւ Թիֆլիսի Կաթողիկէ ս. Աստուածածին եկեղեցու ծխականների ընդհանուր ժողովը, ուր հերթական պարապմունքների շարքում համայնքը առաջին անգամ զբաղվեց ծխական բարեգործութեան հարցով. այդ կարևոր խնդիրը արծարծեց ժողովում նոյն եկեղեցու երէցփոխ՝ Երդուեալ հաւատարմատար Յովսէփ Ամիրխանեան, որը բացատրելով ժողովականներին եկեղեցական համայնքի բարոյական պարտականութիւնը՝ հոգալ իր թշուառների և անկեալների մասին՝ առաջարկեց 1) ծխականների միջից ընտրել մի աղքատախնամ յանձնաժողով, 2) եկեղեցու տրդիւնքից 10% յատկացնել յոգուտ չքաւոր և թշուառ ծխականների և 3) մի «աղքատաց տուփ» ունենալ եկեղեցում յատուկ այդ նպատակի համար։ Այդ բոլոր առաջարկութիւնները ծխական ժողովը ջերմ համակրութեամբ ընդունեց, որի մասին նոյն ժողովում կազմվեց համառօտ արձանագրութիւն։

—

Այսօր, յունիսի 3-ին, տեղի կունենայ կովկասեան բժշկական ընկերութեան նիստը, որի ժամանակ կը քննվեն մի քանի վարչական հարցեր և կը կարդացվեն Զուլնկովսկու, Ֆեոդորովի և Կուպցովի ըէֆերատները։

—

Աւստրիական և գերմանական կառավարութիւնների մէջ համաձայնութիւն է կայացել Բալտիկ և Սև ծովերը միմեանց հետ միացնելու հարցի վերաբերմամբ՝ Էլբա, Օդեր, Վիսլա, Սան և Դնեստր գետերի միջոցով։ Այս ջրային ճանապարհը ամենից աւելի կարճը կը լինի Սև ծովից դէպի հիւսիսային Եւրոպա, և նրա շնորհիւ Վարշավա, Համբուրգ, Լիւբէկ և Շտէտին քաղաքները կը կապվեն Սև ծովի հետ։ Մտադրութիւն կայ այդ ճանապարհից մի ճիւղ տանել դէպի Վիէննա։ Որովհետև այս ջրային ճանապարհի շինութեան մէջ անմիջապէս շահագրգռված է և ռուսաց կառավարութիւնը, որի հողի վրա գտնվում է Վիսլայի միջին ընթացքը և Դնեստրի համարեա ամբողջ ընթացքը՝ նրա գետաբերանի հետ միասին, ուստի երկու կառավարութիւնն էլ, թէ գերմանականը և թէ աւստրիականը, դիմեցին ռուսաց հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեան և առաջարկեցին նրան մասնակցել այդ ձեռնարկութեան։

—

Պետերբուրգի գեղարուեստական ակադեմիայում նկարիչ Բազվաղովսկի ի ցոյց է դրել ռուս նկարիչների պատկերների մի ժողովածու, որ յատկապէս նշանակված է գիւղերի և աւանների համար։ Կամենալով գիւղական ազգաբնակութեան ծանօթացնել ռուս նկարիչների գործերի հետ, Բազվաղովսկի մտադիր է այդ ժողովածուն ուղարկել գիւղերը՝ գիւղական պատկերահանդէսներ կազմելու նպատակով։

—

Երկաթուղիների գլխաւոր վարչութիւնը որոշել է չինել առանձին վագոններ, որ յարմարեցրած լինէին յատկապէս ծանր հիւանդների տեղափոխութեան համար։

—

Մայիսի 26-ին փակվեց միջազգային լուսանկարչական ցուցահանդէսը, որ բացվել էր ապրիլի 10-ին։ Այս ժամանակի ընթացքում ցուցահանդէսն այցելեցին ընդամենը 15,000 հոգի։ Ցուցադրված առարկաների մեծ մասը ծախվեց։

—

ՄԵՂՐԻՒՑ մեզ գրում են. «Մայիսի 22-ին, երեկոյեան ժամը վեց ու կէսին, Մեղրի գիւղը իր բոլոր խաղողի այգիներով, բամբակի արտերով և պտղատու ծառերով ենթարկվեց բնութեան սարսափելի պատժին.—կարկուտը փչացրեց գիւղացու տաներկու ամսվայ աշխատանքը։ Կարկուտի մեծութիւնը ընկոյզի չափ էր. նա տանց ուղիղ 15 բոպէ։ Խաղողից գիւղացու յոյսը բոլորովին կտրվեց. տեղ-տեղ բամբակի արտերը նորից պիտի ցանել, եթէ միայն սերմ գտնվի։ Կարկուտից յետոյ տեղացաւ նաև յորդ անձրև. գիւղի փողոցներով գետեր էին հոսում, շատ տներ ջրով լցվեցին. վնասվեցին ջերամի որդերը. իսկ մէկի տան որդերը ամբողջապէս մնացին հողի տակ։ Կանանց ու երեխաների լաց ու կոծից, մարդկանց ախ ու վախից լսողի սիրտը կտորկտոր էր լինում։ Փողոցներում տեղ-տեղ հողաթմբեր են գոյացել հեղեղից, տեղ-տեղ խորխորատներ բացվել։ Վնասը շատ մեծ է։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԲԻԱԿԱՆ ԴԷՊՔԵՐԻ ԱՌԻԹՈՎ

II

Ո՞վ էր Կարագէօրգին, որի անունը դեռ մինչև այժմ այնքան քաղցր է հնչում ամեն մի սերբի համար և որի ժառանգը այժմ բազմելու է սերբական գահի վրա։—Մի անգրագէտ ու կոպիտ մարդ, գիւղացու զաւակ, որ իր յիշատակն անմահացրեց հերոսութեամբ ու հայրենասիրութեամբ։

Նա ծնվել ու մեծացել է Տօպօլ կոչվող լեռնավայրում։ Աղքատիկ երկիր էր դա՝ բռնութեան ու հարստահարութեան լծի տակ ճընշված։ Բայց միայն Տօպօլը չէր այդ վիճակին ենթակայ. ամբողջ Բալկանեան թերակղզին հեծում էր թիւրք հողատէրերի, «դպխիների» ու «սպախիների» անսահման հարստահարութիւնից, տառապում էր «ռեանիչերների» անզուսպ գազանութիւնից։

Այդպիսի պայմաններում ապրող Գէօրգին չէր կարող անտարբեր մնալ, չէր կարող սառնասիրտ կերպով դիտել իր ազգակիցների ու մերձաւորների տանջանքը։ Նրա սրտում եռում էր վրիժառութեան կայծը և մի յարմար րոպէի սպասում, որպէս զի ամբողջապէս բռնկվի։ Եւ ահա գալիս է այդ րոպէն։

1787 թուականին սերբերի մի ստուար բազմութիւն ապստամբութեան փորձ է անում թիւրքերի դէմ. այդ փորձին մասնակցում է նաև Կարագէօրգին։ Սակայն փորձն անաջող է անցնում, ուստի ապստամբները ստիպված են լինում Աւստրիա գաղթել իրանց կեանքն ու պատիւն ազատելու համար։

Գաղթում են շատերը, որոնց թւում և Կարագէօրգին՝ իր հօր ու ազգականների հետ։ Նրանք իրանց հետ վերցնում են ամբողջ ունեցածքը, որպէս զի թիւրքերին աւար չը մնայ։ Մօտենում են Սավա գետին, բայց հէնց այդ ժամանակ Գէօրգիի ծերունի հայրը—Պետրոնին զղջում է իր արածը և սկսում է համոզել որդուն, որպէս զի ուրիշների նման իրանք էլ յետ վերադառնան և հայրենի գիւղում ապրեն։

—Թիւրքերը կը ներեն մեզ, ասում է նա, ոչինչ չեն անէ։

Բայց Գէօրգին անդրդուելի է մնում, նախատեսնելով հօր ցանկութեան կորստաբեր հետևանքը։

—Եթէ այդպէս է, ասում է հայրը, մենակ շարունակիր ճանապարհդ, իսկ ես տուն կը վերադառնամ։

—Ի՞նչպէս, զայրացած բացականչում է Գէօրգին, ես թողնեմ, որ դու տուն վերադառնաս և թիւրքերը քեզ երկարաւոր մահով տանջեն.—երբէք, աւելի լաւ է մեռիր հէնց այստեղ, քո հարազատ որդու ձեռքով։

Այդ խօսքերից յետոյ նա հանում է ատրճանակը, գնդակահար է անում ծերունին *) և նրա տանջանքները տեսնել չուզենալով, հրամայում է ընկերոջը մի քանի հարուածներ ևս հասցնել՝ մահն չուապեցնելու համար։

Մեռնում է ծերունի հայրը, իսկ որդին անցնում է Սավա գետը, հարևաններին թողնելով իր ամբողջ հօրը և ասելով.

—Թաղեցէք իմ ծերունին և խմեցէք նրա հոգու փրկութեան համար։

Այդպիսի արտասովոր վարմունքը միանգամից յայտնի է դարձնում Կարագէօրգիին։ Նրա մասին խօսում են սերբերը. նրա անունը հասնում է Թիւրքերին։ Իսկ ապագան մի լայն ասպարէզ է բաց անում այդ անունը աւելի բարձրացնելու, աւելի հռչակելու համար։

Աւստրիայում Կարագէօրգին կամաւոր զինուորների շարքն է մտնում և շուտով ֆելդֆեբելի աստիճանի արժանանում։ Բայց իր դիւրագրգիռ բնաւորութեամբ նա երկար չէ կարողանում տանել այդ ծառայութիւնը, կռւում է իշխանութեան հետ և, լեռները քաշվելով, հայդուկ է դառնում։ Այդպէս անցնում է բաւական ժամանակ, մինչև որ քիչ խաղաղվում են սերբական գաւառները և Թիւրք կառավարութիւնը մոռացութեան է տալիս սերբերի ըմբոստ վարմունքը։

Դրանից յետոյ Կարագէօրգին նորից հայրենիք է վերադառնում և խոզերի առուտուր սկսում, որ ամենաօգտաւէտ գործն էր Սերբիայում։ Սակայն երկար չէ տևում այդ խաղաղ զբաղմունքը։ XIX-որդ դարի լուսաբացին բռնկվում է սերբական յեղափոխութիւնը և Կարա Գէօրգին նրա գլխաւոր ղեկավարն է դառնում։

Սկզբում անմիջապէս թիւրք կառավարութեան դէմ չէր ուղղված ապստամբութիւնը, այլ սպախիների ու դպխիների դէմ։ Սերբերից շատ շատերն համոզված էին, որ իբր սուլթանը իրանց օգնական է, որ նրան էլ շատ

*) А. Ранке: „Исторія Сербіи“ եր. 184.

ուղարկած է լինում մի նայիբ և հինգ ֆարաշներ պ. Պրիմի տան պաշտպանութեան համար։ Այդ միջոցին պ. Պրիմի մօտ են գալիս իր բարեկամները, անգլիական փոխհիւպատոս պ. Ստիվէնսը և ասում է. «ես ձեր տեղը լինէի, չէի հեռանայ»։ Նոյն բանը կրկնում է ռուսաց բանկի դիրեկտոր պ. Բարալօն, աւելացնելով, թէ գոնէ սպասիր մինչև պ. Պախիդօնով հիւպատոսի ամառանոցից գալուն. մանրամասնութիւնը գրելով, դուլամով յայտնել եմ, ապա կառք եմ ուղարկել։ Պ. Պրիմը նրան պատասխանում է. «կոտորածի պատճառ չեմ ուզում լինել, քանի որ նորին բարձրութիւնը ինձ գրաւոր հրամայել է, ես անպայման պէտք է հեռանամ»։ 12-ից մի քառորդ անց՝ կառքը պատրաստ է լինում՝ պ. Պրիմը իր տիկնոջ, վարժուհու և երեխայի հետ կառքը նստելով հեռացան նայիբ սուլթանի բերած ձիաւորների և մաքսատան ձիաւորների ուղեկցութեամբ։

Մինչև այդ ժամանակ Վալիաթի հրամանով փակվում և կնքվում են «Լոխմանիա», «Քամալ» և «Թուրբիքաթ» դպրոցները, նաև կնքում են բոլոր գինետները և այն խանութները, որտեղ եւրոպական խմիչքներ են վաճառվում։ Ժողովուրդը, այդ բանը տեսնելով, ցրվում է, թալանները պարծենալով ասում են ժողովրդին. «տեսէք, որ միութեամբ ամեն բան կարող ենք անել. իսլամի երկրի պաշտպանութեան համար մեր մէջ եղած կուսակցութիւնները պէտք է մի կողմը թողնենք. ինչ ճանապարհներ չինվել է մինչև այժմ, որ չը կայ. ինչ ենք կորցրել. ճանապարհների չինութեան համար մի քանի հարիւր հոգի օտարներ պէտք է գան և այդ դէպքում մեր կանանց տերը չը պէտք է լինենք։ Եւ այլ այսպիսի խօսքեր, ինչպէս խօսվում է, նաճաֆի մեծ մուշտէրին է գրել. այս բաների առաջն առնել և թոյլ չը տալ, որ քրիստոնեաների ոյժը շատանայ իսլամի երկրում»։

Միւսիո Պախիդոնով, ռուսաց հիւպատոսը, իր օգնականի հետ Նեմեթապատ ամառանոցից ժամի $2^1/_2$-ին քաղաք գալով, գնում է ուղղակի քարկուզալը՝ մօտից ծանօթանալու մանրամասնութեան և պահանջում է բոլոր քրիստոնեաների կեանքի և գոյքի ապահովութիւնը։ Քարկուզալից պահանջում է, որ անմիջապէս յայտնէ Վալիաթին իր պահանջները և ժամանակ նշանակէ ներկայանալու և առանձին խօսելու համար։ Նորին բարձրութիւնը պատասխանել էր, թէ քրիստոնեաների հանգստութեան և ապահովութեան համար հարկ եղածը կարգադրված է, թող այդ կողմից միամիտ լինի հիւպատոսը ու վաղը առաւօտեան ժամը 10-ին, որոշել է միջոց ունկնդրութեան համար։ Պ. հիւպատոսը, հիւպատոսարան գալով, իր պաշտօնեաների միջոցով, միամտացրեց հայերին, որ որ և է դէպք տեղի չի ունենայ, թող ամեն կողմից միամիտ և հանգիստ լինեն. մանրամասնութիւնները հեռագրով թէհրան դեսպանատան և Պետերբուրգ մինիստրութեան հաղորդեց։

Այսօր բոլոր քրիստոնեայ վաճառականները և արհեստաւորները իրանց խանութներն փակած իրանց տներումն են. նաև փակ են բանկերը, մաքսատունը և պօստը։ Կասկածում եմ, որ նամակ պօստը չընդունէ, որովհետև Ռուսաստանի պօստը եկել է, բայց նամակները չեն տալիս։

II

Թաւրիզ, մայիսի 24-ին

Ինչպէս ենթադրել էի, անցեալ օր պօստատունը որ և է նամակ չընդունեց։ Երէկ առաւօտեան ժամը 10-ին հիւպատոս պ. Պախիդոնովը իր օգնական պ. Իվանովի հետ ներկայացաւ նորին բարձրութիւն Վալիաթին։ Ինչ խօսակցութիւն է ունեցել, ոչ ոքի յայտնի չէ, խօսակցութեան ժամանակ ոչ ոք չէ եղել և տեսել է կէս ժամ։ Հիւպատոսը թագաժառանգի մօտից դուրս գալուց յետոյ նորին բարձրութիւնը հեռագրով հրամանագրել է, որ մինչև լուսնի 14-ը (մայիսի 28-ը) Ղարադաղի ձիաւորները Թաւրիզում պատրաստ լինեն, նաև հրամանագրել է, որ շրջակայքից երեք ֆոլտ սարվաղ մինչ այն օրը քաղաքումը պատրաստ լինեն։

Անցեալ գիշեր պ. Պրիմը Մարանդից հեռագրով յայտնել էր վալիաթին իր անվտանգ Մարանդ հասնելն և վալիաթը հեռագրով հրամայել է Մարանդում սպասել նոր կարգադրութեան։

Երէկ Թէհրանից պ. Նօսը հեռագրով յայտնել է պ. Պրիմի օգնական Ֆլէցբանին թէ Թաւրիզում պատահած դէպքերի մանրամասնութիւնը իմանալով, ինքը պահանջել է կամ պ. Պրիմի վերադարձը կամ ընդունել բոլոր բելջիկ պաշտօնեաների հրաժարականը։

Մաքսատան և պօստատան կառավարութիւնը առ ժամանակի կերպով յանձնվել է պօստատան նախկին կառավարիչ Միրզա Հասան-խանի միրփանջին, երեկ և այսօր մաքսատունում չէ եղել ոչ մի քրիստոնեայ պաշտօնեայ։

Արտաբիլի և Ուրմիայի կողմերում էլ խռովութիւններ կան, թիւրքաց սահմանի վրա գտնվող գիւղերում ապրող ասորիները ընդհարում են ունեցել դրացի քիւրդ բէգերի հետ, մի քանի քրդեր սպանվել են, երեք օր յետոյ բէկզադա քրդերը Շեյխի ու թիւրքաց սահմանապահ ծպտեալ զօրքի օգնութեամբ պաշարում են Մարանա կոչված գիւղը, ուր կենտրօնացած են լինում ասորի ջիլօները, գիւղը կրակում և 21 հոգի սպանում են։ Այս դէպքի վրա բողոքական և գերմանացի միսիոնարները անգլիական և ռուսաց հիւպատոսարանին հեռագրել և ապահովութիւն են ուզել։ Ուրմիայի շրջակայ գիւղերի ոչխարները և տաւարները քրդերը թալանել տարել են. գիւղերի ազգաբնակութիւնը երկիւղի մէջ լինելով, բոլորն հաւաքվել են Ուրմի քաղաքում։

Արտաբիլի Շահսէվանները նոյնպէս իրար հետ վէճի են բռնվել, ճանապարհներն կտրել, անց ու դարձ անողներին կողոպտում են, նոյն իսկ յանդգնում են քաղաք գալ և ցերեկով ձեռք ընկածները տանել, դատաւորը երկիւղից բերդից դուրս չէ գալիս։ Ինչ հեռանք կունենայ, յայտնի չէ։

Երէկ երեկոյեան, քաղաքումս լուր պատեց, որ մայիսի 22-ին Սպահանում էլ խռովութիւններ են տեղի ունեցել ու ցոյցեր են եղել դատաւորի դէմ։ Պարսիկների մէջ խօսվում է, որ Պարսկաստանի շատ քաղաքներում ցոյցեր պէտք է լինեն, իբր թէ Նաճաֆի մեծ մուշտէիդը գրել է ամեն տեղ թէ մեր բարութիւ-

հաճելի է այդ ապստամբութիւնը սանձարձակ դահիճների դէմ։ Ահա այդպիսի միամտութիւնն էր պատճառը, որ մի քանի թեթև ընդհարումներից յետոյ սերբերի առաջաւոր մարդիկ՝ «Կնեզները» ժողով են գումարում մի վանքում և մի այսպիսի գանգատ ուղարկում սուլթանին.

—«Դահիճները թալանեցին մեզ, աւերեցին, այլ ևս ոչինչ չը մնաց. բայց այդ դեռ քիչ է նրանց համար։ Նրանք հանդիստ չեն թողնում մեր հոգին, անպատվում են մեր պատիւն ու կրօնը. խլում են մեր կանանց, քոյրերին ու աղջիկներին, պղծում են մեր վանքերն ու եկեղեցիները, անարգում են մեր քահանաներին ու վարդապետներին։ Եթէ դու մեր թագաւորն ես, եկ և ազատիր մեզ այդ չարագործներից. իսկ եթէ ոչ, գոնէ իմաց տուր այդ մասին, որ փախչենք սարերն ու անտառները կամ խեղդվենք գետերում»

Իսկ սուլթանը չի գալիս. գրական ոչինչ չի անում։ Նա միայն մի թուղթ է ուղարկում դահիճների անունով և զգուշացնում է նրանց, որ հանդարտվեն։ Սակայն այդ զգուշութիւնը հակառակ ազդեցութիւն է գործում։ Զայրացած դահիճները դիմում են աւելի կտրուկ միջոցի։ Նրանք իրանց մարդկանցով արձակվում են սերբական գիւղերի վրա՝ աւերում, թալանում, կոտորում են։

Դանակը արդէն հասել էր ոսկորին, լցվել էր համբերութեան բաժակը։ Այլ ևս տատանվել չէր կարելի, ուստի և սերբերը միանում են, կազմում են հայդուկային խմբեր և պարզում ընդհանուր ապստամբութեան դրօշակը։ Երեք ուժեղ անձնաւորութիւններ՝ Կարա Գէօրգի, Եանկո Կատիչ, և Վասո Զարապիչը անցնում են այդ ժողովրդական չարժման գլուխը և անդուլ ջանքերով առաջ մղում նրան։

Ե. Թ.

ԱՐՑԱԹԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սկոպիայից հեռագրում են եւրոպական լրագիրներին, որ Կոչանի և Պէչէվսկի գաւառներում կատաղած կերպով աւերումներ և սպանութիւններ են գործում Փոքր-Ասիայի բաշիբոզուկները։ Ջերբակալութիւններին, սպանութիւններին և աւարառութիւններին վերջ չը կայ։ Զինուորները խլում են բնակիչներից նոյն իսկ ուտելիքը։ Սպանված են 50 կանանցից աւելի։ Դրութիւնը սարսափելի է։

—Վիէննայի «Information» լրագիրը հետևեալն է հաղորդում Մակեդոնիայի վիճակի մասին. «Վերջին դէպքերը Մակեդոնիայում, հազարաւոր անմեղ բոլգարների ձերբակալութիւնը, ամբողջ գիւղերի աւերումը, ինչպէս և եւրոպական հասարակական կարծիքի վերաբերմունքը այդ դէպքերին, այն հեռանքն ունեցան, որ այժմ մակեդոնական չարժման նոյն իսկ չափաւոր կողմնակիցները սկսել են հաւանութեամբ վերաբերվել Սալոնիկի դէպքերին և, ընդհանրապէս, յեղափոխականների տէրրորիստական գործողութիւններին։ Եւրոպայի վերաբերմունքը մակեդոնական դէպքերին այժմ բոլորովին պարզ է. երբ օդը ցնդեցրին երկու երկաթուղային կամուրջ և այդ կարող էր վնասել եւրոպական առևտրական շահերին—ամբողջ Եւրոպան սկսեց զայրանալ տէրրորիստների վարմունքի դէմ։ Ապա օդը ցնդեցրին օսմանեան բանկը Սալոնիկում. դժբախտաբար, պատահմամբ, պայթիւնի ժամանակ մի քանի եւրոպացիներ ապանվեցին և հեռեալ օրերում Սալոնիկ հասան ու խարիսխ ձգեցին աւստրիական ու իտալական զինուորական նաւերը ոչ թէ նրա համար, որ հաշիւ պահանջեն թիւրքաց կառավարութիւնից այն սարսափելի գիշերվան համար, երբ կոտորվեցին տասնեակ բոլորովին անմեղ բոլգարներ, այլ պաշտպանելու համար աւստրո-ունգարական հպատակներին, որոնց երբէք ոչ մի վտանգ չէր սպառնում։ Եւրոպական հասարակական կարծիքը պահանջեց, բացի դրանից որ Թիւրքիան օրինակելի կերպով պատժէ «մարդասպաններին»—այդպէս էին կոչում ազատութեան համար մաքառող և յուսահատութեան հասցրած մակեդոնացիներին—այդպիսի բան, ի հարկէ, երկու անգամ հարկաւոր չէր պահանջել Թիւրքիայից։ Շատ կարճ ժամանակում երկրի երեսից ջնջվեցին Բոլդօվա, Բանիցա և Մօգիլա գիւղերը իրանց բոլոր բնակիչներով։ Թիւրքերը կամենում էին պատժել միայն կօմիտէի անդամներին—ասում են Եւրոպայում, բայց «անիրաւ» գնդակները և ռումբերը կպչում էին նաև աւերված գիւղերի երեխաներին և կանանց։ Ամենազարհուրելի ճակատագրի ենթարկվեց մայիսի 9—22-ին Սմերդէշ գիւղը, որ 1200 բնակիչ ունէր, Մօնաստիրի վիլայէթում։ Բէդիֆների մի գունդ յարձակվեց գիւղի վրա մայիսի 9-ին այն սարսուռակով, թէ բնակիչները պաշար են հասցրել ապստամբներին և գիւղը հիմնայատակ արին և 1200 բնակիչներից 300-ը հազիւ կարողացան փախչել։ Թիւրքիան, ի հարկէ, հերքում է այդ բոլորը և Եւրոպան հաւատում է նրա հերքումներին։ Եւրոպայում այդ գազանային գործողութեան լուրը աւելի քիչ տպաւորութիւն գործեց, քան մակեդոնական յեղափոխականների ձեռքով երկու կամուրջներ քանդելու լուրը։ Մակեդոնական կօմիտէների վրա անէծք են թափում, երբ նրանք քանդում են բանկի պատերը, իսկ եթէ գազանաբար կոտորում են հազարաւոր անմեղ կանայք և երեխաներ—եւրոպական պետութիւնները բաւականանում են միայն «Բ. Դռան բարեկամական խորհուրդներ տալով»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԴՈՐԾԱԿԱՎՈՒԹԻՒՆԻՑ

31 մայիսի

ՎԻԷՆՆԱ։ Երբ կայսրը գնում էր դէպի Շէնբրուն, կառքի վրա արձակվեց մի մարդ և սպառնաց փայտով։ Պալատական կառապանը խփեց նրան ձեռքի մտրակով։ Ձերբակալված մարդը խելագարված դուրս եկաւ. նրա անունն է Եակով Բէյլ։ Պարզվեց, որ նա դեռ յունվար ամսին ներկայացել էր հանդիսաւոր գործերի դեպարտամենտին, իրան Աստուծու որդի է անուանել և ասել է, որ կայսերը նշանաւոր բաներ պէտք է հաղորդէ Սաքսոնիայի Լուիզա պրինցէսսայի մասին։

ԲԵԼԳՐԱԴ։ Երեկոյեան ժամը 11 և 20 ր., կատարեալ խաղաղութիւն է։ Ժամը 10-ից փողոցները դատարկ էին։ Զինուորական փոքրիկ պահակախմբերը ման են գալիս քաղաքում։ Կենտրոնը հետևակ զօրքի մի գնդի պաշտպանութեան տակ է։

ՎԻԷՆՆԱ։ Հերքում են այն լուրը, թէ աւստրիական դեսպան Դումբան մի նաւ է ուղարկել Զէմլին՝ Գեոերվարդէյնից աւստրիական զօրքերը կանչելու համար։

Կ. ՊՕԼԻՍ։ Սուլթանի մօտ ունկնդրութեան ընդունվեցին Դէլօվը և Նաչեվիչը։

ԿԱՐԼՍԲԱԴ։ Հանգուցեալ Ալէքսանդր թագաւորի անձնական բժիշկ Վելիչկովիչը յայտնեց, որ խօսք անդամ չը կար թագաւորի և թագուհու արտասահման ճանապարհորդելու մասին։ Նրան անհաւանական է թւում այն լուրը, թէ թագաւորը գնդակահար է արել Նաումովիչին, որովհետև նա իր ննջարանում զէնք չէր պահում։

Կ. ՊՕԼԻՍ։ Լէմաի փաչան մի քանի բատալիոններով դուրս եկաւ Դէլակովից՝ Մալիսեան նահանգում դիմադրութիւն ցոյց տուող ալբանացիներին պատժելու համար։ Իպէկից աքսորված են բարենորոգումներին թշնամի ալբանացիները։ Մասնաժողովը պարզեց, որ Սմէրդէշում 15 ժամ չարունակ կռիւ է տեղի ունեցել։ Շրջակայքի թիւրք ազդաբնակութիւնը թալանեց գիւղը։

Նաչեվիչի միսիան վերջացած է համարվում։

ՍՕՖԻԱ։ Մինիստրների խորհուրդը վճռեց սերբական դէպքերի առիթով լիազօրութիւն տալ իր ներկայացուցիչներին յայտնելու միւս պետութիւններին, որ Բոլգարիան կատարեալ խաղաղութիւն կը պահպանէ և չի խառնվի Սերբիայի ներքին գործերին։ Ցիշելով նախկին բարեկամական յարաբերութիւնների մասին, շրջաբերականն ասում է, որ զինուորական նախապատրաստական միջոցներ ձեռք չեն առնվի բացի սահմանագլխի պահպանութիւնն ուժեղացնելուց։ Իշխանական պալատի դրօշակը վար է իջեցրած—իբրև ազգի նշան։

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ Բէլգրադից հաղորդում են, թէ բժշկական քննութիւնից երևացել է, որ թագաւորն ապանվել է 27 գնդակով, իսկ թագուհին—5 գնդակով և սրերի մի քանի հարուածով։

ՊԱՐԻԶ։ Սենատը երկրորդ ընթերցումից յետոյ, 220 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 45-ի, ընդունեց զօրքի մէջ երկամեայ ծառայութիւն մտցնելու օրինագիծը։

ԿԵՕԼՆ։ Սերբիացի քաղաքագէտներն ու օֆիցէրները իշխան Պետր Կարագէօրգիեվիչի հօր եղբօրորդի պրոֆէսօր Նենադովիչի ղեկավարութեամբ խորհրդակցում են Վիէննայում։ Նրանք իշխան Պետրից պատասխան են ստացել, որով նա պատրաստականութիւն է յայտնել՝ ընդունել սերբական թագը, եթէ սկսուպչինան նրան միաձայն ընտրէ և եթէ պետութիւնները յայտնեն իրանց համաձայնութիւնը. իսկ մինչև այդ ժամանակ նա կը մնայ Ժընեվում և չի ուզենայ խառնված լինել Բէլգրադի սպանութիւններին։

Ծունիսի 1-ին

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մայիսի 31-ին Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին Օգոստափառ երեխաների հետ գնացին Նոր Պետերգոֆ՝ Ալէքսանդրիա ամառանոցը։ Մեծ Իշխան Կոնստանդին Կոնստանդինովիչը Օգոստափառ ամուսնու և երեխաների հետ ուղևորվեց Սորէլ-գիացի պ. Գրիմ, վախիցը իսկոյն թողեց Թաւրիզը և ճանապարհվեց Կովկաս։

Պարսիկ ժողովուրդը այս դէպքումն էլ մասամբ իրաւունք ունի. որովհետև այդ բելգիացի պաշտօնեան պաշտօնի գլուխ անցած օրից սկսած բիրտ և կոչտ կերպով է վարվել տեղացի պարսիկ և հայ վաճառականների հետ և նրանց զանազան նեղութիւններ տուել։ Նոյն իսկ համարձակվել է հայ վաճառականներին և մաքսատան հայ ծառայողներին խոզեր կոչել և նրանց անարգել։

Այդ լուսաւորված Եւրոպայի լուսաւորված զաւակը (?) նոյն իսկ յանդգնեց արդէն խաւար Պարսկաստանը աւելի մեծ խաւարով պատել,—լուսաւորութեան և առաջադիմութեան միջոց և ազդակ եղող գրքերի Պարսկաստան մուտքը ու տարածումը դժուարացնելով։ Օրինակ, պարսիկ լուսաւորված երիտասարդների կողմից, նոյնպէս հայերի կողմից, Եւրոպայից, Հնդկաստանից, Կ. Պոլսից, Եգիպտոսից, Բէյրուտից բերել տրված գրքերից իբրև արժէքաւոր ապրանք (?) մաքս պահանջելուց յետոյ, սահմանագլխից մինչև Թաւրիզ պոստի ծախս էլ է պահանջում. այնպէս որ 10 կոպէկ արժող մի գիրք իր սովորական պոստի ծախսով միասին՝ այս յաւելուածական պոստի ծախսը և մաքսի վճարումը հաշուելով՝ մինչև Թաւրիզ հասնելը 20 կոպէկ և երբեմն նոյն իսկ աւելի է նստում։

Ահա, այսպէս, լուսաւորված եւրոպացին փոխանակ լուսաւորութիւն տարածելու, նոյն իսկ արգելք և խոչնդոտ է հանդիսանում լուսաւորութեան տարածմանը։ Երևի, իմանալով, որ խաւար երկիրներում միայն կարող են իր նման եւրոպացիներ հաց ճարել և կառքերով ու բազմաթիւ ծառաներով փարթամ կեանք վարել, մինչդեռ իրանց տեղերում, ով է իմանում, թերևս փողոցներ են չափչփում անգործութիւնից։

Այս տարի մարտ ամսից սկսած մաքսատան մի նոր սակացոյց են հաստատել, որի շնորհիւ ժողովրդի անհրաժեշտ առարկաների արժէքները կրկնապատկվել են և հասարակութիւնը մեծ նեղութիւն և զրկանք է կրում։ Իսկ այժմ էլ տարածվել է, որ հացի և մսի նման ամենապէտքական նիւթերի վաճառման իրաւունքը նոյնպէս տալու են այդ լուսաւորված բելգիացիներին։

Այս մի քանի պատճառների հետևանքով պարսիկ ժողովուրդը վերջին ծայր գրգռված դիմում է ծայրահեղ միջոցների և առաջ է բերում ներկայ խառնակութիւնները և ցոյցը։

Հետևանքի և արդիւնքի մասին այժմէն ոչինչ չէ կարելի ասել. այս կամայական երկրում ամեն բան մէկ օրից միւսը փոխվում է և ամեն մի կարգադրութիւն միւսին հակասում։ Սակայն ներկայումս ստոյգ է, որ պարսիկ ժողովուրդը մասամբ հասել է իր ցանկութեան, հեռացնել տալով լուսաւորված բելգիացի պաշտօնեաներին և միւս հայ պաշտօնեաներին, որոնք նուազ նեղութիւն չէին պատճառում վաճառական դասակարգին, մանաւանդ նրանցից մէկ քանիսը, որ հլու հպատակներ էին դարձել այդ բելգիացի տնօրէնին։

Դոկտ. Կ. Փաշայեանց

նից և հնազանդութիւնից օգտվելով, ֆլաները մեծ մեծ պաշտօնների գլուխ են անցել և խեղճ իսլամ ժողովրդին աջ ու ձախ կեղեքում են, միջոցներ ձեռք առէք որ ֆլաներն մուսալաթ չը լինեն, եթէ ոչ «դին ալդան գեթդիր»։ Ինչ հետևանք կունենայ այս գրութիւնները և ինչով կը վերջանան այս չարժումները, դա միայն Աստուած գիտէ։ Եթէ նորութիւններ լինեն կը հաղորդեմ։

*

III

Թաւրիզ, մայիսի 22-ին

Երկու օր առաջ Թաւրիզ խուժանը, առաջնորդութեամբ սէյիդների, բազմաթիւ թալանեցին երեք պարսկահպատակ գինեվաճառ հայերի խանութները։ Պարսիկները գրգռված են ի միջի այլոց և այն բանից, որ միւսլիման երկրում հայերը բացարձակօրէն միւսլիմաններին գինի, օղի և կոնեակ են վաճառում։

Ինչպէս ուրիշ առիթներով գրված է, հայերը այս վերջին տարիներում սկսել են պարապել այդ կեղտոտ արհեստով. այդ բանի մէջ մեծ շահ տեսնելով, զանազան արհեստաւորներ, ինչպէս դերձակ, մանրավաճառ, ժամագործ, և այլն, իրանց խանութներում վաճառում են նաև ոգելից խմիչքներ—գլխաւորապէս պարսիկներին։ Իսկ հայ թաղերում բազմաթիւ ամեր արդէն գինեսների են վերածվել, որտեղ յաճախում եմ մեծ մասամբ պարսիկ սրիկաներ, և որտեղ ամեն տեսակ զզուելի և կեղտոտ արարքներ են տեղի ունենում։ Այո, հայ ընտանիքի ծոցում, որտեղ ապրում են անչափահաս երեխաներ, տղայ թէ աղջիկ սկսեցին նաև տեսնել լինում իրանց մօր, քրոջ և այլ ազգականների լպիրշ և պոռնիկ արարքներին։ Ընտանեկան սուրբ յարկը այսպէս պղծվելով, ամօթի և բարոյականութեան ազնիւ զգացմունքը բոլորովին անհետանում և նրանց տեղ իշխում են լրբութիւնը, ապականութիւնը, պղծութիւնը և ոճիրը։

Եթէ պարսիկների իրաւացի բողոքներին այժմ չը տան մտածող և ապագայ մեծ չարիքները նախատեսող հայերը, Թաւրիզի հայութիւնը մեծամասնութեամբ այդ ապականութեան աղբիւրի մէջ պէտք է թաթախվի, որտեղից փրկութեան յոյս չը կայ։

Ինչպէս երևում է, պարսիկների այս արարքների տակ թաքնված են եղել ուրիշ նպատակներ և գրգռումներ որովհետև այսօր մի մեծ խռովութիւն տեղի ունեցաւ—մի մեծ ցոյց կառավարութեան դէմ և ամբողջ բազարն ու խանութները փակվեցին, ինչպէս նաև կառավարական կարևոր պաշտօնատունները, մաքսատունը, պօստատունը և այլն։

Պարսիկ ժողովուրդը իր մեծ կրօնականների հետ միացած պահանջում է, որ մաքսատան և պօստատան մէջ ծառայող բոլոր եւրոպացի պաշտօնեաները հեռանան և նրանց տեղ պարսիկներ պաշտօնի կոչվեն։ Կառավարութիւնը, աւելի մեծ խառնակութիւններից և դէպքերից վախենալով, առ այժմ բաւարարութիւն է տուել այս պահանջին, հեռացնելով բոլոր եւրոպացի և հայ պաշտօնեաները, նոյն իսկ մաքսատան և հեռագրատան տնօրէնը՝ բելգիացի պ. Գրիմ, վախիցը իսկոյն թողեց Թաւրիզը և ճանապարհվեց Կովկաս։

Պարսիկ ժողովուրդը այս դէպքումն էլ մասամբ իրաւունք ունի. որովհետև այդ բելգիացի պաշտօնեան պաշտօնի գլուխ անցած օրից սկսած բիրտ և կոչտ կերպով է վարվել տեղացի պարսիկ և հայ վաճառականների հետ և նրանց զանազան նեղութիւններ տուել։ Նոյն իսկ համարձակվել է հայ վաճառականներին և մաքսատան հայ ծառայողներին խոզեր կոչել և նրանց անարգել։

Այդ լուսաւորված Եւրոպայի լուսաւորված զաւակը (?) նոյն իսկ յանդգնեց արդէն խաւար Պարսկաստանը աւելի մեծ խաւարով պատել,—լուսաւորութեան և առաջադիմութեան միջոց և ազդակ եղող գրքերի Պարսկաստան մուտքը ու տարածումը դժուարացնելով։ Օրինակ, պարսիկ լուսաւորված երիտասարդների կողմից, նոյնպէս հայերի կողմից, Եւրոպայից, Հնդկաստանից, Կ. Պոլսից, Եգիպտոսից, Բէյրուտից բերել տրված գրքերից իբրև արժէքաւոր ապրանք (?) մաքս պահանջելուց յետոյ, սահմանագլխից մինչև Թաւրիզ պոստի ծախս էլ է պահանջում. այնպէս որ 10 կոպէկ արժող մի գիրք իր սովորական պոստի ծախսով միասին՝ այս յաւելուածական պոստի ծախսը և մաքսի վճարումը հաշուելով՝ մինչև Թաւրիզ հասնելը 20 կոպէկ և երբեմն նոյն իսկ աւելի է նստում։

Ահա, այսպէս, լուսաւորված եւրոպացին փոխանակ լուսաւորութիւն տարածելու, նոյն իսկ արգելք և խոչնդոտ է հանդիսանում լուսաւորութեան տարածմանը։ Երևի, իմանալով, որ

գաւորը նրան դաւադրութեան ղեկավար էր համարում։

Իշխանաղն Միրկոն դժուար թէ ընտրվի, որովհետև ամուսնացած է Ալէքսանդր թագաւորի հօրեղբօր աղջկայ հետ։

2 յունիսի

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ։ Կիսլովոդսկի բուժական սեզօնը բացվեց յունիսի 2-ին։ Արդէն բաւական հիւանդներ են եկել։ Եղանակը և առողջապահական դրութիւնը լաւ է։

ՍՕՖԻԱ։ Բոլգարական լրագիրները հաղորդում են, որ Մակեդոնիայում նոր ընդհարումներ են տեղի ունեցել։ Կօչանի, Բաղովիչի և Տետչեսի կազաների շատ գիւղեր շրջապատված են և թալանված։ Լեռները փախած մի քանի բնակիչներին բռնել են և Ուսկիւբի բանտը դրել, որտեղ այլ ևս տեղ չը կայ նոր բանտարկեալների համար։ Բանտարկեալների մեծ համախմբումը յաճախակի մահացութիւն է առաջացրել։ Կառավարչական շրջաններում շարունակում են մտածել, թէ Նաչեվիչի միասիան բաւարար հետևանք է ունենալու, որին ապացոյց կարող է ծառայել այն հանգամանքը, որ սուլթանը նրան ընդունել է մայիսի 30-ին։

ԲԷԼԳՐԱԴ։ Երեկոն խաղաղ անցաւ։ Շատ զբօսնողներ կան։ Նախկին արմատական Վելիմօրովիչը նշանակված է սենատի նախագահ և նախագահելու է յունիսի 2-ին տեղի ունեցողիք սենատի և սկուպշչինայի միացած նիստերին։ Մայիսի 31-ին ժամանակաւոր կառավարութիւնը ներում շնորհեց և հրամայեց բանտից ազատել բոլոր քաղաքական յանցաւորներին և այն մարդկանց, որոնք մեղադրվում են տպագրական խօսքով յանցանք կատարելու մէջ։ Յեղափոխութեան օրից մինչև այժմ տեղի չէ ունեցել ոչ մի բանտարկութիւն, ոչ մի դատավճիռ։ Նատալիա թագուհին հեռագրով դիմել է այստեղ ապրող իր նախկին պալատական տիկիններից մէկին և հարցրել, թէ արդեօք կարող է Սերբիա գալ՝ որդու դերեզմանը տեսնելու համար։ Ամբողջ Սերբիայում կարգ և խաղաղութիւն է տիրում։ Փոխգնդապետ Միլիսալաւ Ժիվանովիչը ինքնասպանութիւն գործեց։ ասում են պատճառն այն է, որ թագաւորի թղթերի մէջ գտնվել է նրա մի նամակը, որով յայտնում է դաւադրութեան մասին։

ԲԷԼԳՐԱԴ։ Երեկոյեան խաղաղութիւն էր տիրում քաղաքում։ Կօնակի առաջ բանակ դրած զօրքերն հեռացան. միայն մի քանի պահապաններ պաշտպանում են Կօնակը։ Շատերը թագաւորական զոյգի գերեզմաններին այցելութեան են գալիս։ Գերեզմանների վրա դրված են հասարակ խաչեր, որոնց վրա գրված է. «Ալէքսանդր Օբրենովիչ» և «Դրագա Օբրենովիչ»։

Կ. ՊՕԼԻՍ։ Բ. Դուռը հաղորդեց ռուսաց և աւստրօ-ունգարական դեսպանութիւններին գրաւոր մանրամասնութիւններ՝ վերջին ժամանակներս կոմիտէների կատարած սպանութիւնների, թալանումների և ուրիշ յանցանքների մասին, նաև այն մասին, թէ զէնքեր են գտնված Ուսկիւբի վիլայէթի Բաղովիչի և Օսմանիէի եկեղեցիներում։ Բ. Դռան երկրորդ հաղորդագրութիւնը Ուսկիւբի վիլայէթից մատնանիշ է անում, որ բոլգարական 8 հրոսակախմբեր անցել են սահմանը, բայց մասամբ ցրվել, մասամբ էլ փախուստի են դիմել։ Մակեդոնական երեք վիլայէթներում բոլգարական ժողովուրդը սկսել է յանձնել զէնքերը, որ ստացել էր կոմիտէներից։

ՍՕՖԻԱ։ Թիւրք զօրքերը քար ու քանդ արին Ադրիանապօլսի վիլայէթի Կազաա և Կիրկ-Քիլիսա գիւղերը։ Բնակիչները բանտարկված են. սարսափահար եղած ժողովուրդը փախաւ դէպի Բոլգարիա։

ԲՈՒԽԱՐԷՍՏ։ Հերքվում է ռումինական զօրքի զինակոչը։

ԲԷԼԳՐԱԴ։ Քաղաքը սովորական տօնական կերպարանք ունի, միայն յաճախ երևացող հետևակ և ձիաւոր պահակախմբերը ցոյց են տալիս, որ դեռ լիովին հաւատ չեն ընծայում խաղաղութեանը։ Պաշտօնական լրագիրներում հրատարակած է, որ մայոր Նաումովիչը նշանակված է Բէլգրադի ժանդարմերիայի գլխաւոր և Դիմիտրիյ Բաղովիչը՝ վճռաբէկ դատարանի նախագահ, իսկ ժանդարմերիայի նախկին գլխաւոր Իվանովիչը և դատարանի նախագահ Նիկոլիչը արձակված են պաշտօնից—կենսաթոշակով։ Կէս գիշերին սենատորների և պատգամաւորների խորհրդակցութիւնը միաձայն վճռեց՝ գործադրութեան մտցնել 1888 թ. սահմանադրութիւնը, միաձայն թագաւոր ընտրել Պետր Կարագէօրգիեվիչին և ուղարկել նրա մօտ պատգամաւորութիւն՝ ազգային ժողովի որոշումն յայտնելու։ Քաղաքում կատարեալ խաղաղութիւն է։

Կ. ՊՕԼԻՍ։ Մեծ վեզիրը մերժեց Նաչեվիչի պահանջները եւրոպական վիլայէթներում բոլգար-մակեդոնական տարրին վարչական պաշտօններ յանձնելու մասին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՑԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշվով, փակագծում Թիֆլիսի հաշվով)

Ուրաղ գնացք Թիֆլիսից—Բաթում ամեն օր դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.) հասնում է Բաթում երեկոյեան 8 ժ. 3 ր. (9 ժ.)։

Ուրաղ գնացք Բաթումից—Թիֆլիս ամեն օր դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 24 ր. (11 ժ. 22 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 8 ժ. 44 ր. (9 ժ. 42 ր.)։

Փոստատար գնացք Բաղուից դուրս է գալիս երեկոյեան 9 ժ. 18 ր. (10 ժ. 16 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 4 ժ. 25 ր. (5 ժ. 23 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 5 ժ. 20 ր. (6 ժ. 18 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժամ 3 րոպէին)։

Մարդատար գնացքը Բաղուից դուրս է գալիս ցերեկվայ 1 ժ. 3 ր. (2 ժ. 1 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժ. 3 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 6 ժ. 51 ր. (7 ժ. 49 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 6 ժ. 58 ր. (7 ժ. 56 ր.)։

Փոստատար գնացքը Բաթումից դուրս է գալիս գիշերվայ 9 ժ. 23 ր. (10 ժ. 21 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 10 ժ. 51 ր. (11 ժ. 49 ր.), հասնում է Բաղու առաւօտեան 5 ժ. 8 ր. (6 ժ. 6 ր.)։

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 10 ժ. 3 ր. (11 ժ. 1 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 10 ժ. 34 ր. (11 ժ. 32 ր.), հասնում է Բաղու ցերեկվայ 3 ժ. 2 ր. (4 ժ.)։

Փոստատար գնացքը դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Երևան երեկոյեան 11 ժ. 32 ր. (12 ժ. 30 ր.), հասնում է Երևան 5 ժ. 14 ր. (6 ժ. 12 ր.), հասնում է Կարս 2 ժ. (2 ժ. 58 ր.)։

Փոստատար գնացքը Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 3 ժ. 57 ր. (4 ժ. 55 ր.), հասնում է Ալէքսանդրոպոլ երեկոյեան 7 ժ. (7 ժ. 58 ր.), Երևանից դուրս է գալիս 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 5 ժ. 11 ր. (6 ժ. 9 րոպէին)։

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Թիֆլիսի ժողովարանը հաղորդում է ի տեղեկութիւն անդամների, կանդիդատների և ժամանակաւոր այցելուների, որ յունիսի 3-ից սկսած, երեքշաբթի և ուրբաթ օրերը, ժողովարանի ամարային բնակարանում կը նուագէ երաժշտական խումբ, երեքշաբթի օրերը կը լինեն կօնցէրտներ և պարեր, իսկ ուրբաթ օրերը—սիմֆոնիական բաժանմունք։ Սկիզբը երեկոյեան 9 ժամին։ Հիւրերը վճարում են 1 ռուբլի մուտքի համար։ 1—1

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Թէպէտև զսնազան պատճառներով որոշած էինք Բնաչխարհիկ Բառարանի Բ հատորն մէկ անգամով հրատարակել, սակայն մեր բազմաթիւ բաժանորդաց խնդրանաց համեմատ, Բառարանիս Բ հատորն լոյս պիտի տեսնէ երկու առանձին գրքերով։ Առաջին գիրքը որ պիտի բաղկանայ 50 քառածալ թերթերէ, զարդարված զուտ ազգային նորանոր գեղեցիկ պատկերներով, հաւանօրէն լոյս կը տեսնէ օգոստոսի վերջը, թղթակազմ բազմագունի գեղեցիկ կողքով, և անմիջապէս կը ղրկվի բաժանորդներուն։ Բաժանորդագրութիւնը դեռ կը շարունակվի։

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ Ա ԵՒ Բ ԳՐՔԵՐՈՒ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է 15 ՖՐԱՆԿ ԿԱՄ 6 ՐՈՒԲԼԻ

Տեսչութիւն տպագրատան
4—4

☛ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ ՁԱՐԳԱՑԵԱԼ ԱՇԵԱՐՀԻ ՓԱՌՔՆ Է ☚

Էջմիածնայ ս. տաճարի զարդանկարելու համար, փարիզաբնակ, Պօղոս պալատները զարդարող, և եւրոպայէն գնահատուած նկարիչ պ. Պէզիրճեանը, որ Վեհափառէն հրաւիրված էր, պարագայէն օգտուելու գաղափարով, այս ամառ Կովկասում, առժամանակեայ փոքր մը որոշած է. կը յայտարարէ, թէ գեղարուեստը սիրող կարող անձնաւորութիւններ իրենց սալօնները պալատական և կամ եւրոպական առաջնակարգ ջրեղ ձևերով զարդարել տալու ցանկացողները, երբ պ. Պէզիրճեանի հետ պայմանի մտնեն, կանխաւ պէտք է վստահին, թէ ամեն տեսակ գոհացում ունենալու են։

Հասցէն՝ Малая-Ванкская ул., д. Потебня.
5—10

Ադրիանուպոլսեան երկաթուղիների Վարչութիւնը

յայտարարում է, որ հինգշաբթի, յունիսի 5-ին, Նաւթլուղ կայարանում, առաւօտեան ժամի 10-ին, կը ծախվեն ստացողից չընդունված՝ դինով լիք հինգ տիկեր, որոնք ուղարկված են Գանձակից Նաւթլուղ, № 1867, 237 պուդ։ Գինին կը ծախվի աճրդի ժամանակ առաջարկված ամենաբարձր գնով։ (3, 4, 5-ին) 1—3

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԷՔՕ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Երկրորդ հատոր

(551+VIII երես, 13 պատկերով)

Բովանդակութիւն.—1) «Մշակի» առաջին տարիները (1872—1876).—«Նշանաւոր Շրջան» (1876—1878, Արևելեան հարց, ռուս-թիւրքական պատերազմ)։

Այս հատորը կուղարկվի միայն այն բաժանորդներին, որոնք լիովին վճարել են իրանց բաժանորդագինը։ Մաս-մաս վճարող բաժանորդներին խնդրում ենք ուղարկել իրանց վրա մնացած մասը։

Երրորդ հատորը լոյս կը տեսնէ աշնանը։

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Բաժանորդագինն է երեք հատորի համար 3 ռուբլի, ճանապարհածախսով 4 ռուբլի։ ԿԱԶՄԱԾ 4 ռուբլի, ճանապարհածախսով 5 ռուբլի 20 կոպ.

Հատորները առանձին-առանձին չեն ծախվի։ Բոլոր երեք հատորները լոյս տեսնելուց յետոյ, գինը կը բարձրացնվի։ Վերադիր վճարով և մաս-մաս բաժանորդագրութիւն չէ ընդունվում։

Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է. 1) Հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը և 2) «Գուտենբէրգ» գրավաճառանոցում։

Օտար քաղաքացիները դիմում են. Тифлисъ, Редакція «Мшакъ»։

ԲԱԳԻՒՈՒՄ բաժանորդ կարելի է գրվել պ. Գրիգոր Տէր-Յովհաննիսեանի մօտ, Ա. Ծաղուրովի գրասենեակում և «Գրօմէթէուս» գրավաճառանոցում։

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում

վաճառվում են հետևեալ հայերէն նոր գրքերը՝

ԱՂԱԲԱԼԵԱՆՑ Բ., Բանաստեղծութիւններ, առաջին հատոր, Աչէքսանդրոպոլ 1903 թ. գ. 30 կ.
ԱՂԱՑԵԱՆՑ Ղ., Անահիտ, Գ տիպ, Թիֆլիս 1903 թ. գինն է 30 կոպէկ.
ԳՕՐԿԻՑ Մ., Զէլկազ և հին ժամանակի պատմութիւններ, Թիֆլիս 1902 թ. գ. 25 կ.
ԼԷՕ, Գրիգոր Արծրունի, հատոր երկրորդ, Թիֆլիս 1903 թ. երեք հատորի գինը 3 ռուբլի.
ԿՈՐԵԼԼԻ Մ., Բարաբբա, Քրիստոսի ժամանակակից վէպ, երկու մաս, Թիֆլ. 1903 թ. գ. 1 ր. 50 կ.
ՀԱՑԿՈՒՆԻ Ս., Էմինեան ազգագրական ժողովածու, հատոր Բ., ժողովրդական վէպ և հէքիաթ, գ. 1 ր. 25 կ., հատոր Դ., ժողովրդական հէքիաթ, Մօսկ.—Վաղարշ, գ. 1 ր. 25 կ.
Ներսէս Մեծի յաղորդներ—Տ. Շահակ Մանազկերտացի, Թիֆլիս 1903 թ. գ. 15 կ.
ՇԱՀԱԶԻԶ ԵՐ., Պատմական պատկերներ, Թիֆլիս 1903 թ. գ. 60 կ.
ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ Մ., Տաղեր, հեղինակի պատկերով և Լէօի առաջաբանով, Թիֆլիս 1903 թ. գինն է 40 կոպէկ.
ԵՍԱՑԵԱՆՑ, Էմիլ Զօլա նրա կեանքը և գրական գործունէութիւնը, Թիֆլիս 1903 թ. գ. 40 կ.
» Լօխմանի հէքիմը, պատկեր, Թիֆլիս 1903 գինն է 8 կ.

Դիմել՝ Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. 2—3

Ե. ԹՈՓՉԵԱՆԻ

Խմբագրութեամբ պատրաստվում են տպագրութեան համար

„ԼՈՅՍ"

ՍԵՂԱՆԻ (1 ր.), ՊԱՏԻ (50 կոպ.) և ԳՐՊԱՆԻ (20 կոպ.) ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՕՐԱՑՈՅՑՆԵՐ 1904 Թ.

Վիճակագրակ., գրականակ., գիտական եւ գեղարուեստ. հարուստ յաւելուածներով։

Աշխատակիցներն են՝ Անարոնեան Ա., Առաքելեան Հ., բժ. Արծրունի Վ., Ա—Դօ, Բաշինջաղեան Գ., բժ. Բուդուղեան Ա., Թումանեան Յով., Իսահակեան Ա., Լէօ, Մատուրեան Ա., ատամնաբոյժ Կաճկաճեան Ն., Ղազարեան Գ., Մալխասեան Ստ., Մանուէլեան Լ., ատամնաբոյժ Մակարեան Գ., Մեծատուրեան Գ., Յովհաննիսեան Տիգ., Նիկողոսեան Ն. քահ., Շիրվանզադէ, Զօրանեան Ա., Պոչեան Գ., Զամբազեան Զ., Սերովբեան Բ., Տէր-Մինասեան Արշ. քահ., Տէր-Միրաքեան Յով., բժ. Օհանեան Գր., Փափազեան Վրթ., դոկտ. Փաշայեան Կ., բժ. Քալանթարեան Լ., Ֆրանգեան Ե. և ուրիշներ։

«ԼՈՅՍ»-ն իր չքեղ արտաքինով (բազմաթիւ պատկերներ) և բազմակողմանի բովանդակութեամբ լինելու է ամեն մի ընթերցողի խորհրդատու ընկերը, ամեն մի ընտանիքի սեղանի զարդը։

Այժմեանից գումարով գնողներին ձեռնտու զիջումն կը լինի։

Սեղանի օրացոյցում կը տպագրվեն նաև յայտարարութիւններ բոլոր լեզուներով. վճարը երեսը—(6×4=24 քառ. վերջօկ)—25 ր., 1/2 եր.—15 ր., 1/4 եր.—8 ր., 1/8—5 ր.։

Դիմել՝ Тифлисъ. Троицкая 11. Е. Топчяну. Արտասահմանից՝ Tiflis. Troizkaia 11. E. Toptschian. Յայտարարութիւններ ընդունվում են նաև պ. Ս. Մարիկեանցի մօտ. Тифлисъ. Головинскій пр. 3, табачн. магаз „Гаванна". 2—10

ՀԱՅ ԾՆՈՂՆԵՐՈՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԴՊՐՈՑ

ԼՕԶԱՆ, ՇՈՒԵՑԵՐԻԱ

Երկրորդ տարի

(16-րդ անգամէն սկսեալ. ձմեռուան վեցամսեայ դասերը կը սկսին սեպտ. 1/14-ին)

Արևելեան կամ հայկական դպրոցը կընդունի 10-էն 20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ծնողներու բաղձանքին համեմատ, գիտական, գրական, առևտրական կամ արդիւնաբերական առողջ ու հիմնաւոր կրթութիւն՝ ներդաշնակօրէն և սերտ կերպով միացած ազգային հիմնական դաստիարակութեան հետ։ Մեր հայ տներուն կաւանդենք, և այս՝ առանց ոևէ մասնաւոր վճարումի, հայոց լեզու (ռուսահայ և տաճկահայ բարբառ), մատենագրութիւն հայոց (հին և նոր), հայոց պատմութիւն և այլն։ Ռուսահայ աշակերտները կարող են նաև ուսանել ռուսաց լեզուն։

Դպրոցիս տարեթոշակը, հակառակ իր ընծայած բազմաթիւ իրական առաւելութիւններուն, անօրինակ կերպով չոփաւոր է։—Ընտանեկան կեանք։—Դպրոցիս յայտագիրը ամեն ուզողի կը ղրկուի։

Տնօրէն՝ Մ. Նալբանդեան, դոկտ. գիտութեանց՝ պրիվատ-դոցենտ

1) Longeraie, Lausanne, Suisse 24—27

Дозволено Цензурою. Тифлисъ, 2 Іюня 1903 г.

Электропечатня Груз. Изд. Т—ва, В. Ванкская ул.